և անվճար աշխատաւոր ժողովրդին յանձնելով՝ հողից հաւասարաբար օգտուելու սկզբունքով (ծափեր):

Յետոյ, նոյն ընկերային օրէնսդրութեան ասպարէզում, Դաշնակցութեան ֆրակցիան ձգտելու է իր նպատակոյն ծրագրի իրականացման նրա բովանդակ ծաւալով՝ առաջին հերթին դնելով օրէնսդրական կարգով 8 ժամուայ աշխատանքի օրայ հաստատման, աշխատանքի պետական հովանաւորութեան և բանուորների ապահովութեան պահանջը (ծափեր):

Քաղաքա-տնտեսական բարենորոգումների բնագաւառում ֆրակցիան պահանջելու է պետական նշանակութիւն ունեցող և ընկերվարական արտադրելակերպի համար բաւականաչափ հասունացած խոշոր ֆինանսական, արդիւնաբերական և առևտրական ձեռնարկութիւնները հասարակութեան սեփականութիւն դարձնել, այլ և արդիւնաբերութեան վերահսկողութեան և ընդհանուր աշխատաւորական պարտաւորութեան հաստատում:

Վերոյիշեալներին զուգընթաց, օրայ մեծագոյն քաղաքական խնդիրն է հանդիսանում Անդրկովկասի ճիշտ սահմանաբաժանումը, ժողովուրդների ինքնուրոյն կանոնների ստեղծումը և նրանց միացումը Անդրկովկասեան ընդհանուր դաշնակցութեան մէջ: Նոր կարգի ամրութիւնն ու կայունութիւնը, երկրի ներքին խաղաղութիւնն ու բովանդակ բարեկեցութիւնը ամենասերտ կերպով կապուած են այս բարդ խնդրի բաւարար լուծման հետ, ուստի և պահանջւում է նրա հանդէպ առանձնապէս ուշադիր վերաբերում:

Ցիշուած խնդիրների իրականացման Հ. Յ. Դաշնակցութիւնը կը նուիրի իր բոլոր ուժերը՝ երկրի բոլոր դեմոկրատների հետ կատարեալ համերաշխութեան և բարեկամական գործակցութեան մէջ:

Միաժամանակ Դաշնակցութիւնը, իբրև միջազգային ընկերվարական ընտանիքի անդամներից մէկը, անյողդողդ հաւատն ունի, որ Անդրկովկասեան Սէյմը իր յետագայ զարգացման ընթացքին կը դառնայ ընկերվարական մտքի ու ստեղծագործութեան հնոց և միջոց Անդրկովկասեան Ընկերվարական միջազգայինի (ծափեր)»:*)

Այսպիսով, Դաշնակցութիւնը առաջադրում էր օրայ հրատապ նշանակութիւն ունեցող չորս խնդիրներ. 1) Ինքնուրոյն Անդրկովկասը համարում է մասնիկը Ռուսաստանի. 2) պատերազմը վերջացնելու պայման դրւում է Թիւրքահայաստանի ինքնավարութիւնը. 3) Անդրկովկասի վերաբաժանումը ազգային կանոնների և 4) միատար-ընկերվարական իշխանութեան կազմակերպումը:

Այս չորս պայմաններն էլ հանդիպեցին Ադրբէջանի ներկայացուցիչների բուռն դիմադրութեան: Նրանց կողմից յայտարարութիւն անող Աղայեւը գտնում էր, որ Սէյմը պէտք է լինի Սահմանադիր Ժողով՝ լուծելու համար Անդրկովկասի ճակատագիրը, որը կտրուած է Ռուսաստանի ընդհանուր ճակատագրից: Ճիշտ է, Աղայեւը դեռ խօսում էր «ազատ ժողովուրդների Ռուսաստանի», «դաշնակցութեան», «Ադրբէջանի ազգային-քաղաքական ինքնավարութեան» մասին, բայց այդ, աւելի շուտ, տուրք էր օրայ ընդհանուր տրամադրութիւններին:

Պատերազմի խնդրում Աղայեւն ևս պահանջում է «ամենավար հաշտութիւն, առանց բռնագրաւումների և ռազմատուգանքի, ժողովուրդների

*)Закавказскій Сейм. Стеногр. отчет. Сессія первая, засѣданіе третье. 1918. Тифлис, стр. 15.